15.10.26 - 17.10.26
09:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետ

Ս.թ. հոկտեմբերի 15–17-ը ԵՊՀ-ում Ժուռնալիստիկայի ֆակուլտետի և Հայկական նշանագիտական ուսումնասիրությունների ասոցիացիայի նախաձեռնությամբ կանցկացվի «Մեդիատեքստ. նշանակություն և արհեստական բանականություն, նոր իմաստների որոնում» խորագրով միջազգային գիտաժողով՝ նվիրված մեդիատեքստերի, նշանագիտության և ԱԲ-ի (AI) ժամանակակից փոխհարաբերությունների քննարկմանը:

Գիտաժողովի սեկցիաների շրջանակում անդրադարձ կարվի մի շարք առանցքային խնդիրների՝ սկսած հուշելու նշանագիտությունից և մարդ-AI համագործակցության մշակույթից, մինչև տեսալսողական մեդիայի փոխակերպումները, լեզվական լանդշաֆտի արտացոլումը մեդիադաշտում, թվային քաղաքացիության ձևավորումը, քաղաքի մշակութային հիշողությունը և ապագայի պատկերի կառուցումը: Առանձին ուշադրություն է դարձվելու մեդիատեքստի նոր զարգացումներին, մեդիայի իմագոլոգիական (պատկերաբանական) դերակատարությանը, ինչպես նաև էկոլոգիական և բիոնշանագիտական հարցերի արտահայտմանը ժամանակակից մեդիատեքստերում:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am